ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

173
(2839

5 դեկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՆՐԱՄԱՍԵՐ՝ ՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ, նաեւ նախագահի թեկնածու Հայկուհի Հարությունյանին ՔՊ-ականները հրավիրել են դռնփակ հանդիպման եւ ճնշումներ գործադրել նրա վրա: Այս մասին ասվում է ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի տարածած հայտարարության մեջ: «Այդ կապակցությամբ առաջարկում ենք հետաձգել ԱԺ-ի մոտակա քառօրյայում նախատեսվող՝ հանձնաժողովի անդամների ընտրությունը եւ կազմակերպել հանրային լսումներ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող քաղհասարակության կոալիցիաների ներկայացուցիչների, այդ թվում՝ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի անդամների հետ»,- պահանջել են քաղհասարակության ներկայացուցիչները: «Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել վերջերս կայացած այդ դռնփակ նիստից: ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցում են, որ նիստի ընթացքում հնչել է 5 հարց: Ագրեսիվ են եղել հատկապես հարցի հնարավորություն ունեցած 2 պատգամավորները՝ Արսեն Թորոսյանը եւ Տրդատ Սարգսյանը, քանի որ երկուսն էլ ունեցել են անձնական հարցեր: Բանն այն է, որ 2020թ. օգոստոսի 6-ին ԿԿՀ-ն վարույթ էր հարուցել այն ժամանակ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի նկատմամբ, քանի որ ՀՀ առողջապահության նախարարությունը ծառայությունների մատուցման հինգ պայմանագիր էր կնքել «Միբս» ընկերության հետ 124 մլն դրամի շրջանակներում, որի տնօրենը նախարարի կինն էր, իսկ մինչ այդ՝հենց ինքը՝Արսեն Թորոսյանը: Իհարկե, հետո ԿԿՀ-ն տվել էր եզրակացություն, որ շահերի բախում չկա, սակայն Հայկուհի Հարությունյանը դեմ էր քվեարկել այդ որոշմանը: Նախարար Արսեն Թորոսյանի գործողություններում շահերի բախման իրավիճակը բացակայում է, իսկ Տրդատ Սարգսյանը Հայկուհի Հարությունյանի հետ խնդիր է ունեցել հարազատ եղբոր գործով: Բանն այն է, որ ԿԿՀ-ն դատավորի թեկնածու առաջադրված Դավիթ Սարգսյանի մասով տվել է բարեվարքության բացասական գնահատական: Իհարկե, ԲԴԽ-ն, հաշվի չառնելով այդ գնահատականը, պատգամավորի եղբորը այս տարվա սեպտեմբերի 22-ին նշանակել է Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, բայց ՔՊ պատգամավորը հաշիվ է պահանջել Հայկուհի Հարությունյանից, թե ինչու է վատ եզրակացություն տվել իր եղբոր մասով: Ավելին՝տեղեկացանք, որ մինչեւ դատավորի թեկնածու դառնալը ՔՊ պատգամավորի եղբայր Դավիթ Սարգսյանը ցանկացել է դառնալ հենց ԿԿՀ հանձնաժողովի անդամ, սակայն նրա թեկնածությունը մերժվել է ներսում: Հայկուհի Հարությունյանին քննադատական հարցեր է ուղղել նաեւ Արսեն Թորոսյանի մտերիմ Մարիա Կարապետյանը, իսկ Վլադիմիր Վարդանյանը իր ոճի մեջ հա՛մ գովել է, հա՛մ խայթել: Իհարկե, ՔՊ-ական պատգամավորներից, ինչպես նաեւ Հայկուհի Հարությունյանից մեկնաբանություններ ստանալու ջանքերը հաջողությամբ չպսակվեցին:

Նիկոլ Փաշինյանի իշխանության երիտթեւը հայ-ռուսական հարաբերությունները հետեւողականորեն փչացնում է: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Ավետ Պողոսյանը «Արմենպրես»-ին հայտնել է, որ նախարարությունը պաշտոնապես դիմել է ռուսական կողմին՝ նախաձեռնելով խորհրդակցություններ երկու երկրների իրավասու գերատեսչությունների միջեւ զանգվածային հեռահաղորդակցման ոլորտում համագործակցության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ընթացքի շուրջ: Ռուսական կողմն էլ ընդունել է հրավերը, եւ դեկտեմբերի կեսերին նախատեսված են խորհրդակցություններ՝ հեռահաղորդակցման ոլորտի միջպետական համաձայնագրի 4-րդ եւ 5-րդ կետերի խախտումների հարցով, համաձայնագրով ձեռք բերված պարտավորությունների իրականացման շուրջ: Իհարկե, թվում է, թե ՀՀ իշխանությունը ՀՀ սուվերենության համար լուրջ ջանքեր է գործադրում, սակայն իրականում Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ռուսական հեռուստաալիքների վրա «բարկացել է» հոկտեմբերի 23-ին ՌԴ առաջին ալիքով հեռարձակված մի հաղորդումից, որտեղ կոշտ քննադատվեց Նիկոլ Փաշինյանը, եւ «Մայր Հայաստան» շարժման ղեկավար Անդրանիկ Թեւանյանն էլ այդ օրը հայտարարեց, որ Փաշինյանը իր հետեւից միշտ արյան հետքեր է թողնում: Իսկ ո՞վ է ՌԴ հեռուստաալիքներին պատժելու մասին հայտարարած փոխնախարար Ավետ Պողոսյանը. նա 2008 թվականի շարժման օրերին ակտիվիստ էր, Լեւոն Տեր-Պետրոսյանի համակիրը: Երբ պայքարը հաջողությամբ չպսակվեց, Ավետ Պողոսյանը արտագաղթեց ԱՄՆ եւ այնտեղ, ըստ մամուլի հրապարակումների, տաքսի է վարել: Այսինքն՝տաքսու նախկին վարորդը պետք է այսօր վճռի հայ-ռուսական հարաբերությունները հեռահաղորդակցության ոլորտում: Ի դեպ, նույն Ավետ Պողոսյանի քաղաքական կուռքը՝Լեւոն Տեր-Պետրոսյանը, Նիկոլ Փաշինյանին որակել է որպես ազգակործան պատուհաս:

ԱԺ պետահիրավական հանձնաժողովը երեկ դեմ քվեարկեց «ՀայաՔվե»-ի նախագծին, որով ՀՀ 58 հազար քաղաքացիներ առաջարկում են քրեական պատասխանատվություն նախատեսել պաշտոնատար անձի կողմից Լեռնային Ղարաբաղը այլ պետության կազմում ընդունելու կամ ճանաչելու եւ Հայոց ցեղասպանությունը ժխտելու վերաբերյալ ցանկացած արարքի համար: Այսինքն՝այսօր կայանալիք ԱԺ լիագումար նիստի ժամանակ ԱԺ պատգամավորները պետք է քվեարկությամբ որոշեն՝հանձնաժողովում բացասական եզրակացություն ստացած նախագիծը մտնում է լիագումար նիստերի օրակարգ, քննարկվելու է ԱԺ նիստի ժամանակ, թե ոչ: «Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները փոխանցում են, որ ՔՊ-ական պատգամավորներն արդեն ստացել են SMS՝մեկ մարդու նման ներկա լինելու այսօվանից մեկնակող ԱԺ նիստերին եւ դեմ քվեարկելու «ՀայաՔվե»-ի նախագծին, որպեսզի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ չմտնի: Այն մասին, թե ինչ է լինելու նախագծի հետ, ինչ են պատրաստվում անել «ՀայաՔվե»-ի նախաձեռնող խմբի անդամները, մեզ ասացին, որ դեռ որոշում չունեն: Իրավական այս ճանապարհը խորհրդարանում սպառվեց, պետք է այլ՝հանրաքվեի տանող ճանապարհով թերեւս գնալ:

ՔՊ-ն որոշել է ակտիվացնել կուսակցության մարզային խմբերը: Արդեն երկրորդ շաբաթն անընդմեջ կուսակցությունը, բացի վարչության եւ նախաձեռնող խմբի հերթական նիստերից, շաբաթ օրերին նախաձեռնող խմբի նիստ է անում նաեւ մարզերում: Նոյեմբերի 25-ին կուսակցությունը վարչության նիստ էր արել Արմավիրի մարզում, իսկ անցած շաբաթ էլ՝դեկտեմբերի 2-ին՝Հրազդան քաղաքում: Մարզային նիստերին մասնակցում են Նիկոլ Փաշինյանը, կուսակցության վարչության անդամները, մարզպետները եւ կուսակցության մարզային ակտիվը: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ականներից տեղեկացավ, որ վարչությունն է որոշում կայացրել նախաձեռնող խմբի նիստեր անցկացնել մարզերում: Ինչպես մեզ փոխանցեցին, մարզային ակտիվից պարբերաբար դժգոհություններ են եղել, որ ցանկանում են մասնակցել նախաձեռնող խմբի նիստերին, բայց չեն կարողանում. նախ՝տեղափոխվելն է իրենց համար խնդիր, բացի դա, ՔՊ կուսակցության Երեւանի կենտրոնական գրասենյակը փոքր է, այս պահին դեռ վերանորոգումներ են այդտեղ ընթանում, շատ մարդ չի տեղավորվում: Ահա այս պատճառով ՔՊ-ականները որոշել են փոխզիջման գնալ, այցելել մարզեր, այնտեղ նիստեր անցկացնել, որպեսզի մարզային ակտիվն իրեն անտեսված չզգա:

ԶՐՈՒՅՑ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԵՎ «ՀԱՅԱՔՎԵ»-Ն

«Ժողովուրդ» օրաթերթն արդեն հայտնել էր, որ երեկ ԱԺ-ի շենքի մոտ տեղի էր ունենում «Հայաքվե» նախաձեռնության կողմնակիցների բողոքի ցույցը:

Նրանք պահանջում էին Ազգային ժողովից ընդունել Արցախի հանձնումը քրեականացնող օրինագիծ, որն այս պահին քննարկվում է Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում:

«Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել նախաձեռնության անդամ, նախկին պատգամավոր Աննա Կոստանյանին:

-Տիկին Կոստանյան, երեկ «Հայաքվե» նախաձեռնության օրենքի նախագիծը քննվեց գլխադասային հանձնաժողովում, այսօր արդեն կմտնի լիագումար նիստերի օրակարգ: Ի՞նչ սպասումներ ունեք: Դատելով իշխանությունների հնչեցրած հայտարարություններից՝ ի՞նչ կարող ենք արձանագրել:

-Ի սկզբանե, երբ որ նախաձեռնությունը մեկնարկում էինք, մենք արդեն կանխատեսումներ ունեինք, որ, բնականաբար, օրվա իշխանությունը այս նախագծով իր գլխին գիլիոտին չի բերելու, իր վիզն ու թեւը կտրի: Բնական է, որ պետք է մերժեին: Հետեւաբար մեծ ակնկալիքներ ո՛չ հանձնաժողովի նիստերից, ո՛չ լիագումար նիստերի օրակարգից չկան: Այս նախաձեռնության տրամաբանությունը կայանում է նրանում, որ 58000 քաղաքացիներ (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված 50000-ը), որոնք եկել են եւ իրենց ստորագրությամբ դիրքորոշում են հայտնել Արցախը Ադրբեջանի կամ որեւէ այլ պետության կազմում չճանաչելու եւ ցեղասպանության պահանջատիրությունից չհրաժարվելու նկատմամբ, իրենց դիրքորոշմամբ ասում են, որ 58000 քաղաքացու ստորագրությունը 2,5 միլիոն բնակչություն ունեցող Հայաստանում ծանրակշիռ թիվ չէ, որպեսզի իշխանությունը մատերի արանքով կամ այսպես ասված կրավորական կեցվածքով չնայի ամեն ինչին: Այդ 58000 քաղաքացիները հետագայում պահանջելու են իրենցից, թե ինչու իրենց հակառակ եզրակացություն տվեցին եւ մերժեցին նախագիծը:

Այստեղ կարեւոր հանգամանք է նաեւ այն, որ նախաձեռնության մասնակիցները հետեւողական լինեն նախագիծը մինչեւ վերջ տանելուն, որովհետեւ ի սկզբանե, երբ որ քննարկվում էր նախաձեռնությունը, ակնհայտ էր, որ այս իշխանությունը ամեն հնարավոր քայլ գործելու է այն խոչընդոտելու, մերժելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»-Ը ԴԺԳՈՀՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմը հայտարարություն է տարածել:

«ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի ուշադրության կենտրոնում են հայտնվել մամուլի եւ փորձագիտական շրջանակների հրապարակումները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ նաեւ Հանձնաժողով) անդամների երկու թափուր պաշտոնների համալրման խնդրահարույց գործընթացի վերաբերյալ: Ըստ այդ հրապարակումների՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը որոշել է այդ պաշտոնում չընտրել առաջադրված թեկնածուներից Հայկուհի Հարությունյանին, որը մինչ այդ զբաղեցրել է Հանձնաժողովի նախագահի պաշտոնը՝նրան հրավիրելով խմբակցության փակ նիստի, որի շրջանակներում խմբակցության մի քանի անդամներ նրան հիշեցրել են իրենց, իրենց ընտանիքների անդամների եւ ընկերների առնչությամբ կայացրած որոշումները եւ գործողությունները՝ դժգոհություն հայտնելով դրանց կապակցությամբ: Այս առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովի ուշադրության թիրախում հայտնված որոշ անձանց վերաբերյալ մտահոգություններ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմը եւս ունեցել եւ կիսել է համապատասխան միջազգային եւ ներպետական գործընկերների հետ: Այդ մտահոգությունները վերաբերել են այդ անձանց հնարավոր ներգրավմանը կոռուպցիոն գործարքներում:

Ցավալի է, որ, Հանձնաժողովի եւ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի մտահոգություններին պատշաճ ուշադրություն դարձնելու փոխարեն, խմբակցությունը, ամենայն հավանականությամբ, առանց ամբողջական պատկերն ունենալու, որոշել է ազատվել Հայկուհի Հարությունյանից՝ տուրք տալով անձնական շահագրգռությամբ առաջնորդվող մի քանի անդամների ցանկություններին: Միեւնույն ժամանակ, կարեւոր ենք համարում արձանագրել, որ Հայկուհի Հարությունյանի նախագահության օրոք Հանձնաժողովն իրեն դրսեւորել է որպես իրապես անկախ եւ արհեստավարժ մարմին հակակոռուպցիոն մարմինների համակարգում, ինչն արտացոլված է մի շարք միջազգային գործընկերների զեկույցներում: Ավելին՝ 2023թ. սեպտեմբերի 6-7-ը Էստոնիայում կայացած Բաց կառավարման գործընկերության համաշխարհային գագաթնաժողովին հենց Հայկուհի Հարությունյանն է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ որպես համաշխարհային լավագույն գործելակարգի օրինակ: Հաշվի առնելով վերոգրյալը եւ արձանագրելով վերջերս վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործում ջանքերը ինտենսիվացնելու վերաբերյալ՝կոչ ենք անում նրա առաջնորդած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը լրջորեն վերաբերվել իրենց լիազորություններին Կոռուպցիայի կանխարգելման անկախ հանձնաժողովի ձեւավորման գործընթացում: Այդ կապակցությամբ առաջարկում ենք հետաձգել ԱԺ-ի մոտակա քառօրյայում նախատեսվող Հանձնաժողովի անդամների ընտրությունը եւ կազմակերպել հանրային լսումներ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող քաղհասարակության կոալիցիաների ներկայացուցիչների, այդ թվում՝ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի անդամների հետ: Խմբակցության մյուս անդամներին առաջարկում ենք չթողնել այս հարցը նեղ անձնական շահագրգռություններով առաջնորդվող փոքրամասնության որոշմանը եւ գործուն մասնակցություն ունենալ այս հարցում»,- նշված է հայտարարության մեջ:

ՄՆԱՑ ՉԵՌՆՈՒՆԱՅՆ

Ինչպես հայտնի է, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի նախագահի պարտականությունները կատարում է դատավոր Մեսրոպ Մակյանը մինչեւ դատարանի նախագահի ընտրությունը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունները Մակյանին թողեցին ձեռնունայն, ու նա չի ընտրվել նույն դատարանի նախագահ: Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի նախագահ է ընտրվել Գոռ Հարությունյանը, որին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանից էին տեղափոխել Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարան: Հիշեցնենք, որ դատական համակարգում լուրեր կային, որ Մեսրոպ Մակյանի մասնագիտական առաջխաղացումը դատական համակարգում պատահական չէ: Նախ դատավոր Մակյանը բեկանեց գեներալ Գրիգորի Խաչատուրովի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը եւ բավարարելով դատախազության միջնորդությունը՝ որոշեց կալանավորել գեներալ Խաչատուրովին երկու ամիս ժամկետով՝ այդպես իր հավատարմությունը ցույց տալով իշխանություններին: Արդյունքում Մակյանի հասցեին քննադատություններ հնչեցին, թե պաշտոնի առաջխաղացման հավակնություն ունի, որդուն՝ Էմիլ Մակյանին, ցանկանում է դատավոր դարձնել, կաշկանդված է ՀՀ-ում հարազատ եղբոր վերաբերյալ քննվող մի քրեական գործով, որը ավելի ուշ կարճեցին, եւ, ի վերջո, ցանկանում է Հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի նախագահ դառնալ: Նրան տվել էին նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի հաստիքը, սակայն վերջում թողեցին ձեռնունայն:

ԴԻՄԵԼ Է ԿԸՀ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ «Հեղափոխության պահապաններ» ՀԿ-ի նախագահ Հայկ Ստեփանյանը դիմել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որպեսզի նիստ գումարեն: Բանն այն է, որ իշխանությունների հետ ժամանակին շատ մտերիմ հարաբերություններ ունեցող Ստեփանյանը որոշել է լքել ԱԺ ՔՊ նախընտրական ցուցակը: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Հայկ Ստեփանյանն իր մտերիմների շրջանում հայտնել է, որ ամեն ձեւով ՔՊ-ից հեռու է ուզում մնալ, ինչի համար էլ կիրաժարվի նաեւ պատգամավորական մանդատից: Նշենք, որ Հայկ Ստեփանյանը շատ մտերիմ հարաբերությունների մեջ էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի հետ ու ամեն գնով սատարում էր Նիկոլ Փաշինյանին:

Հիմա Հայկ Ստեփանյանը բոլորի հետ շատ լարված հարաբերություններ ունի, գրեթե ամեն օր հանդես է գալիս շատ սուր քննադատությամբ: Մենք փորձեցինք ԿԸՀ դիմելու հարցի հետ կապված զրուցել Հայկ Ստեփանյանի հետ, սակայն վերջինս միայն ասաց, որ ժամը 16.00 ԿԸՀ-ն նիստ է հրավիրել, այնտեղ էլ կներկայացնի իրավիճակը:

Ավելի ուշ ԿԸՀ-ն արտահերթ նիստում պատգամավորի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչել:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Հայկ Վարուժանի Ստեփանյանն ինքնաբացարկի դիմում է ներկայացրել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեկտեմբերի 4-ի արտահերթ նիստում Հայկ Վարուժանի Ստեփանյանի գրանցումն ուժը կորցրած է ճանաչել: Ինքնաբացարկի դիմումն օրենքով սահմանված կարգով նոտարական վավերացմամբ է եղել, հետեւաբար վերջինս նիստին չի մասնակցել:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ՎԻՃԵՑԻՆ

«Ես չեմ կարող կողմ քվեարկել նրան, որ մարդը, մեկ օր անգամ չծառայելով, գումարով ազատվի բանակից»,- դեկտեմբերի 4-ին ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նիստում հայտարարեց ՔՊ խմբակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը՝ անդրադառնալով ՔՊ մեկ այլ պատգամավորի Հայկ Սարգսյանի ներկայացրած նախագծին:

«Փաստացի դուրս է գալիս, որ ծառայությունից խուսափած մարդուն, որը փաստացի դասալքությամբ է զբաղվել, ես պետք է հնարավորություն տամ, որ գումարով իր գործած հանցանքը ներենք:

Ցանկացած այլ պարագայում, երբ ծառայում է մեկ ամիս կամ 6 ամիս կամ 1 տարի, ես խնդիր չեմ տեսնում, բայց ոչ մի օր չծառայելու համար գումար վճարելով քրեական պատասխանատվությունից ազատվելու մեջ ես լուրջ խնդիր եմ տեսնում»,-ասաց նա:

Հայկ Սարգսյանը հակադարձեց. «Իմ պարզաբանումներից հետո Դուք պարտավոր կլինեք կողմ քվեարկել այս օրենքին:

Դուք կողմ եք քվեարկել համաներման մասին օրենքին, որը 1360 քաղաքացիների հնարավորություն է տվել ոչ մի օր չծառայելով, ոչ մի դրամ չվճարելով ազատվել քրեական պատասխանատվությունից: Դուք հիմա ասում եք՝ կողմ չեմ քվեարկի, որ քաղաքացիները վճարեն 15 մլն դրամ եւ չծառայեն:

Բազմաթիվ քաղաքացիներ չեն ծառայում բանակում առողջական խնդիրներ ունենալու պատճառով կամ պատրվակով: 2011-2019 թվականների ընթացքում 50 հազար քաղաքացիներ չեն ծառայել բանակում՝ որեւէ դրամ չվճարելով: 2011-2019-ին շուրջ 10 հազար քաղաքացի չի ծառայել բանակում ոչ առողջական, այլ խնդիրներ ունենալու հիմքով: 2265 քաղաքացի չի ծառայել բանակում օտարերկրյա բուհերում ուսանելու արտոնությունով: Ընդամենը բանակում չծառայելու համար դատապարտվել է բանակում չծառայածների 1 տոկոսից ավելի քիչը, ավելի ճիշտ՝ հայտնաբերվածների 1 տոկոսից ավելի քիչը: Այսինքն՝ Դուք չե՞ք ուզում, որ այդ քաղաքացիները տան այդ գումարը չծառայելու դիմաց»:

Վիլեն Գաբրիելյանն անդրդվելի էր. «Պետք է Ձեզ հիասթափեցնեմ. Ձեր ասած համաներումը ընդունել է 7-րդ գումարման ԱԺ-ն, իսկ ես այդ ժամանակ պատգամավոր չեմ եղել եւ, բնականաբար, կողմ չէի կարող քվեարկել այդ նախագծին: Եթե լինեի պատգամավոր, ամեն ինչ կանեի, որ այդ նախագիծը չընդունվեր:

Ես չեմ կարող պատկերացնել, թե ոնց կարելի է մարդուն, որը խուսափել է պարտադիր զինծառայությունից, ազատենք քրեական պատասխանատվությունից, եւ նա ոչ մի օր չծառայի»:

Վիլեն Գաբրիելյանը կոչ արեց վերանայել օրենքի նախագծի այդ կետը. «Ինձ համար խնդիրը սկզբունքային է. ես չեմ կարող մարդուն, որը փաստացի գործել է հանցանք, փողով այդ հանցանքի համար նախատեսված պատժից օրինական ազատեմ»:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ըստ այս օրենքի նախագծի՝27-ից 37 տարեկան քաղաքացուն հնարավորություն է տրվում զինվորական ծառայություն անցնել 12 ամիս ժամկետով եւ վճարել 2.5 միլիոն դրամ, զինվորական ծառայություն անցնել 6 ամիս ժամկետով եւ վճարել 5 մլն դրամ, զինվորական ծառայություն անցնել 1 ամիս ժամկետով եւ վճարել 10 մլն դրամ, զինվորական ծառայության փոխարեն վճարել 15 մլն դրամ:

«ՀԱՅԱՔՎԵ»

ՀԵՏԱՁԳՎԵԼ Է ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ազգային ժողովի հայտարարության նախագիծը, որը մշակել եւ շրջառության մեջ է դրել ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցությունը՝ համաձայնեցված ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության հետ, վերաբերում է «ՀայաՔվե» քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցին: «Առաջին անգամ հաջողված նախադեպ ունենք, երբ քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացվում է անհրաժեշտ 50.000 ստորագրություն: 58.000 քաղաքացիներ միացել են նախաձեռնությանը: Այս նախաձեռնության արժեւորումը նրանում է, որ ազգային կարեւորագույն հարցերին է վերաբերում»,- ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի դեկտեմբերի 4-ի արտահերթ նիստի ընթացքում ասել է ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը: Նա նշել է, որ «ՀայաՔվե» քաղաքացիական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցը քննարկվել է «Հայաստան» խմբակցության՝ նոյեմբերի 24-ին հրավիրած խորհրդարանական լսումների ժամանակ: Արդյունքում նախատեսվել է ՀՀ քրեական օրենսգրքում լրացումների նախագիծ, որի համաձայն՝ հատուկ նորմով քրեորեն պատժելի արարքներ են որակվում ՀՀ անունից Լեռնային Ղարաբաղը որեւէ այլ պետության կազմում ճանաչելն ու Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը:

Արծվիկ Մինասյանը մեջբերումներ է կատարել խորհրդարանական երեք քաղաքական ուժերի՝ ԼՂ հիմնախնդրի լուծմանը վերաբերող նախընտրական ծրագրերից՝ ընդգծելով, որ դրանցում կարմիր թելով անցնում է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության հարցը:

Պատգամավորները հարցեր են ուղղել զեկուցողին, որոնք վերաբերել են ԼՂ հիմնախնդրի լուծման տրամաբանությանը, ընդհանուր պետության փաթեթին, Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղարի վերաբերմունքին, «ՀայաՔվե» նախաձեռնության հիմնավորման տեքստին, ԵԱՀԿ Մխ առաջարկած կարգավորումներին, ԼՂ-ում 2023 թվականին տեղի ունեցած իշխանափոխությանը, ԼՂ լուծարման մասին հրամանագրին:

Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը հետաքրքրվել է Արծվիկ Մինասյանից, թե ինչու հայտարարությունը չի ձեւակերպվել որպես օրենքի նախագիծ եւ ներկայացվել հանձնաժողովին: «Մի սուբյեկտն ուժ կիրառեց, պատասխան չստացավ, հաջորդ սուբյեկտն ասաց՝ անվտանգության համար պատասխանատու եմ, ուժ կիրառվեց, էլի անպատասխան մնաց: Ինչո՞ւ փաստաթղթում չկա դրա արձանագրումը»,- հետաքրքրվել է Վլադիմիր Վարդանյանը: Պատգամավորի հարցին ի պատասխան՝ Արծվիկ Մինասյանը նշել է, որ հայտարարության մեջ պատրաստ են իրացնել առաջարկները:

Խոսելով հայտարարությունը նախագծով փոխարինելու առաջարկի մասին՝ Արծվիկ Մինասյանը հայտնել է, որ տպավորություն է, թե սահմանադրական կարեւորագույն սուբյեկտին՝ քաղաքացիներին, ուզում են փոխարինել մեկ պատգամավորով: Խորհրդարանականը նշել է, որ դեմ է նման մոտեցմանն ու տեղեկացրել, որ յուրաքանչյուր կողմ իրացնում է իր իրավունքը:

Հայտարարության նախագծի հարակից զեկույցը ներկայացրել է հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, որը ողջունել է սահմանադրական ինստիտուտի գործարկումը: Պատգամավորն այն որպես ժողովրդավարական նվաճում է որակել:

«Նախագիծն ինքնուրույն բովանդակություն չունի, այն որեւէ եղանակով առարկայական հարց չի ծածկում, որն ընդգրկված է ԱԺ գալիք նիստերի օրակարգում. այն առաջ է քաշվել, որպեսզի հնարավոր լինի լսումներ անցկացնել: Բովանդակային մասով այն արտացոլում է քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունը եւ պարունակում է որոշակի առաջարկներ, որոնք օրենսդրական առանձին քննարկման առարկա կարող են դառնալ»,- ասել է Վլադիմիր Վարդանյանն ու առաջարկել արձանագրել, որ հայտարարությունն արդեն իսկ կատարել է իր առաքելությունը, այն է՝ լսումները տեղի են ունեցել: Վլադիմիր Վարդանյանը կոչ է արել հանձնաժողովականներին դեմ քվեարկել հայտարարության նախագծին:

Ելույթների ընթացքում պատգամավորներն անդրադարձել են ԼՂ հակամարտությանը, այն լուծելու մասով վարված բանակցություններին: Հնչել են քաղաքական գնահատականներ:

Հայտարարության նախագծի հեղինակ Արծվիկ Մինասյանն առաջարկել է հարցի քննարկումը հետաձգել քվեարկության փուլում այն լրամշակելու նպատակով:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱՎ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած աղմկահարույց նախագիծը երեկ դրական եզրակացություն ստացավ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում:

Խոսքը աղմուկ բարձրացրած այն նախագծի մասին էր, որը հնարավորություն է տալիս 27 տարին լրացած, սակայն պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին ազատվել գործող օրենսդրությամբ սահմանված քրեական պատասխանատվությունից:

Չնայած քննադատություններին՝ ՔՊ-ականները հանձնաժողովում կողմ քվեարկեցին նախագծին:

Հանձնաժողովի անդամ Արմեն Խաչատրյանը, թեեւ հանձնաժողովում կողմ քվեարկեց նախագծին, բայց շեշտեց՝ քննադատություններ շատ են լինելու: Նախագիծը կմտնի մեկնարկելիք ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայկ Սարգսյանը վստահություն էր հայտնել, որ իր հեղինակած նախագիծն ընդունվելու է ԱԺ-ում:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՉԻ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ

Ադրբեջանը դեռեւս չի արձագանքել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի վերաբերյալ հայկական կողմի վերջին առաջարկներին: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ լրագրողների հետ ճեպազրույցում այս մասին ասաց արտաքին գործերի փոխնախարար Մնացական Սաֆարյանը:

«Երբ պատասխան լինի, կնշենք»,- ասաց Սաֆարյանը:

Նոյեմբերի 21-ին հայկական կողմը ադրբեջանական կողմին է փոխանցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի վերաբերյալ իր 6-րդ առաջարկը:

ԱՐԴՈՒԿԸ ՄԻԱՑՎԱԾ Է ԵՂԵԼ

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը նկատել է, որ Մաշտոցի պողոտայում գտնվող Roberto խանութների ցանցի մասնաճյուղում հրշեջներ կան:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց Ներքին գործերի նախարարության հետ, որտեղից մեզ պատասխանեցին, որ խանութ սրահի հետ կապված հրդեհի վերաբերյալ որեւէ ահազանգ չեն ստացել:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը կապվեց տվյալ հասցեում գտնվող խանութ սրահի մենեջերի փոխարինողի հետ, ով մեզ պատմեց, թե իրականում ինչ է պատահել. «Իրականում հրդեհ չի եղել, նոր աշխատակիցը շորերն արդուկելիս է եղել, եւ արդուկի գոլորշիից միացել է հակահրդեհային անվտանգության ազդանշանը, այդ պատճառով էլ հրշեջներ էին եկել:

Տեղյակ չի եղել, որ այդ հատվածում չի կարելի արդուկ անել»:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՆՑԱՎՈՐ ՇՂԹԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ բացահայտվել է 2019-2021թթ. ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խումբ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների օրինականացման մեխանիզմը, ինչպես նաեւ շղթայում ներգրավված անդամներից 4-ի ինքնությունը, որոնցից 3-ին ներկայացվել են մեղադրանքներ:

Մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ Կոտայքի մարզի Առինջ գյուղի 24-ամյա բնակիչ Վ.Մ.-ն, թմրամիջոցների ապօրինի իրացմամբ զբաղվելու նպատակով 2019-2021թթ. մի խումբ անձանց, այդ թվում՝ Խ.Ֆ.-ի հետ նախնական համաձայնությամբ վերջինիս կողմից «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծված եւ կառավարվող «Is2oke», «Is2oke420» եւ «Marð E2ery Market» առցանց խանութ-հարթակներով զբաղվել են առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների շրջանառությամբ՝ դրանում ներգրավելով նաեւ այլ հանցակիցների, կատարել դերաբաշխում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պարզվել են հանցավոր շղթայում ներգրավված եւս երկու մասնակցի ինքնությունը, որոնցից մեկը Երեւան քաղաքի 25-ամյա բնակիչ Հ.Հ.-ն է, մյուսը՝ Երեւան քաղաքի 27-ամյա բնակիչ Գ.Ա.-ն:

Վերջիններս, 2021թ. օգոստոսից ներգրավվելով հանցավոր խմբավորման կազմում, նշված գործունեությամբ զբաղվող Խ.Ֆ.-ի եւ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ վերջիններիս կողմից ստեղծված եւ կառավարվող տելեգրամյան էջերի միջոցով տեւական ժամանակ զբաղվել են առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ՝ կատարելով դրանց տեղափոխում, ըստ քաշերի առանձնացում, փաթեթավորում եւ ՀՀ տարածքում տեղադրում, թմրամիջոցների գտնվելու վայրերի լուսանկարահանում եւ ծրագրային հավելվածի միջոցով դրանց գտնվելու վայրերի կոորդինատների նշում, որի համար թմրամիջոցների վաճառքից ստացված գումարներից, որպես իրենց մասնաբաժին, յուրաքանչյուր տեղադրման համար ստացել են գումար:

Վ.Մ.-ն պարբերաբար կառավարել է վերը նշված տելեգրամյան խանութ-հարթակները՝ թմրամիջոցների արժեքի եւ ձեռք բերման պայմանների շուրջ նամակագրություններ վարելով նշված խանութ-հարթակների միջոցով թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց հետ, որոնց հետ համաձայնության գալուց հետո թմրամիջոցի համապատասխան չափաբաժնի արժեքը կազմող գումարը պահանջվել է փոխանցել Խ.Ֆ.-ի եւ հանցակիցների կողմից կառավարվող «Qiwi», «Юmoney» համակարգի, ինչպես նաեւ ՀՀ եւ օտարերկրյա այլ էլեկտրոնային դրամապանակներին:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Վ.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության, առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման համար:

ՊԱՐՔՎԵՑ

ՎԻՐԱՎՈՐՈՒՄ Է ՍՏԱՑԵԼ

Երեկ գիշեր հրազենային վիրավորում ստացած զինվորի դեպքից «Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես՝ զինվորն իրավապահներին հայտնել է, որ զենքի հետ աշխատանք է կատարել ու անզգուշությամբ կրակել է իր վրա: Չնայած զինվորի կողմից հայտնած տեղեկություններին՝ իրավապահները քննություն են կատարում՝ հասկանալու համար՝ որքանով է հավաստի նրա հայտնած տեղեկությունը: Ի դեպ, հարցաքննության ժամանակ զինվորն իրավապահներին հայտնել է, որ բուժվելուց հետո ցանկանում է շարունակել ծառայությունը:

Հիշեցնենք, որ երեկ ՊՆ-ն հայտնեց, որ դեկտեմբերի 4-ին՝ ժամը 02:50-ի սահմաններում, հրազենային վիրավորում է ստացել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության N զորամասի զինծառայող Ա. Հ.-ն:

Զինծառայողի առողջական վիճակը գնահատվում է կայուն ծանր: Այս պահի դրությամբ վիրավոր զինծառայողի կյանքին վտանգ չի սպառնում:

Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն:

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ՝ ԷՐԵԲՈՒՆԻՈՒՄ

Shamshyan.com-ը հայտնել էր, որ դեկտեմբերի 2-ին «Էրեբունի Մոլ»-ի տարածքից դանակահարված անչափահասների են տեղափոխել հիվանդանոց:

«Ժողովուրդ» օրաթերթին դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես՝ երիտասարդները վիճել են աղջկա համար, որից հետո 16 եւ 15 տարեկան տղաները ծեծի են ենթարկել 15 եւ 19 տարեկան այլ տղաների: Վիճաբանությունն այն աստիճան է թեժացել, որ դանակներ են հանել ու սկսել են վնասել միմյանց: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 15 եւ 19 տարեկան տղաներին դանակի բազմաթիվ հարվածներով արնաշաղախ վիճակով տեղափոխել են հիվանդանոց: Ըստ նախնական տեղեկությունների՝ դանակահարություն կատարած 16-ամյա տղային գտել են, իսկ մյուս անձին իրավապահները դանակի հետ միասին փնտրում են:

Ավելին՝ իրավապահները մտել են Էրեբունի վարչական շրջան եւ անչափահասների են տանում բժիշներ՝ հարցաքննության:

ՓՈՐՁԵԼ Է ԻՆՔՆԱՍՊԱՆ ԼԻՆԵԼ

Դեկտեմբերի 3-ին ինքնասպանության փորձ է տեղի ունեցել Արտաշատի Դմիտրով գյուղի գերեզմանատներից մեկում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 32-ամյա բնակիչը գյուղի գերեզմանատան մոտ խմել է մեծ քանակությամբ դեղահաբ՝ փորձելով այդպես վերջ տալ իր կյանքին: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նշված գերեզմանատան մոտ քաղաքացիներ են եղել, որոնք քաղաքացու վիճակը տեսնելով՝ շտապօգնություն են հրավիրել ու նրան տեղափոխել են հիվանդանոց:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բնակչի կյանքը փրկել են: Իսկ ինչո՞ւ է տղամարդը գնացել այդ քայլին. իրավապահները պարզել են, որ պարտքերից դրդված է նա փորձել վերջ տալ կյանքին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

93-ԱՄՅԱ ԿԻՆՆ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնում շարունակվում է Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի տարեց բնակչուհու սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Ավելի վաղ Քննչական կոմիտեն հայտնել էր, որ 2023 թվականի դեկտեմբերի 1-ին՝ ժամը 14:40-ին, Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 1-ին փողոցի տներից մեկում հայտնաբերվել էր նույն հասցեի 93-ամյա բնակչուհի Ա. Առաքելյանի դին՝ գլխի շրջանում առկա վնասվածքներով:

Քննությամբ տվյալներ էին ձեռք բերվել այն մասին, որ տարեց կնոջը կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ է հասցրել նույն համայնքի բնակիչ, 24-ամյա Է.Ա.-ն:

Նախաքննության ընթացքում կատարված անհետաձգելի գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի՝ էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ եւս:

Մասնավորապես՝ պարզվել է, որ գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ՝ Է. Ա.-ն ուշ երեկոյան նախ այցելել է նախկին ընկերուհու տուն, թակել լուսամուտը, այնուհետեւ տեսնելով, որ նկատել են իրեն՝ չբացահայտվելու նպատակով հեռացել է եւ գնացել հարեւանությամբ գտնվող տարեց կնոջ տան բակ, կոտրել տուժողի տան պատուհանի ապակին եւ, խախտելով տանտիրուհու բնակարանի անձեռնմխելիությունը, պատուհանով ապօրինի մուտք է գործել տուն:

Այնուհետեւ մոտեցել է անկողնում պառկած, անօգնական վիճակում գտնվող կնոջը եւ հասկանալով, որ վերջինս ճանաչել է իրեն՝ ապօրինի տուն մտնելու իր հանցագործությունը թաքցնելու նպատակով, կյանքից զրկելու դիտավորությամբ բռունցքով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ա. Առաքելյանի գլխի եւ դեմքի շրջանին, որի հետեւանքով կինը մահացել է:

Բացի այդ, քննությամբ նաեւ պարզվել է, որ նախքան կնոջ մահը վրա հասնելը 24-ամյա երիտասարդը տուժողի նկատմամբ կատարել է սեռական բնույթի բռնի գործողություններ:

Ա. Առաքելյանին սպանելուց հետո երիտասարդը տանտիրուհուն պատկանող երկու բջջային հեռախոսները հափշտակել եւ հեռացել է:

Ձերբակալված Է.Ա.-ի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել էր տուժողին պատկանող բջջային հեռախոսը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 24-ամյա երիտասարդի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով, 207-րդ հոդվածի 1-ին մասով եւ 254-րդ հոդվածի 1-ին մասով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 1-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 125 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՎԵՐՎԱԾ Է

Դիլիջանի բնակիչները բողոքել են, որ քաղաքի կենտրոնից՝ համայնքապետարանի եւ քաղաքի մշակույթի տան մոտից դեպի Դիլիջանի հիվանդանոցի թաղամաս իջնող հետիոտնի կարճ ճանապարհը ամիսներ շարունակ քանդված է, դրանից օգտվելու փոխարեն, իրենք ստիպված են լինում օգտվել տաքսիներից: «Ժողովուրդ» օրաթերթը եղավ այդ տարածքում, տեսավ, որ աստիճաններով հետիոտնի ուղին կիսաքանդ է, այն վերնամասում փակված է մաշված անվադողերով, սակայն Դիլիջանի որոշ բնակիչներ օգտվում են դրանից:

Հենց այդ պահին 12-13 տարեկան մի տղա իջավ աստիճաններով, սայթաքեց, քիչ մնաց՝ ընկներ, սակայն, բարեբախտաբար, չտուժեց: Ներքեւից աստիճաններով դեպի վեր՝ դեպի քաղաքի կենտրոն բարձրանալով, մաշված անվադողերին հասնելով՝ տեսանք, որ հողային մեծ աշխատանքներ կատարելուց, տարածքը քանդելուց հետո շատ նեղլիկ կածան դեռեւս մնում է քաղաքի կենտրոնից սկիզբ առնող այդ ճանապարհի սկզբում: Այդ նեղ կածանից օգտվելը վտանգավոր է, քանզի հետիոտնը կարող է գլորվել ներքեւ: Հայտնվեց այդտեղ մեծ հենապատ կառուցած, հողային մեծ աշխատանքներ կատարած դիլիջանցին իր բարեկամ տղամարդու հետ, հարկ եղավ նրանց լրագրողի վկայական ներկայացնել: Տարածքում մեծ շինարարություն կատարող դիլիջանցին ասաց, որ այդտեղ շինություններ կառուցելուց հետո ինքը վերականգնելու է հետիոտնի թեք ճանապարհը, այն լուսավորվելու է: Ասացին, որ հողի սեփականատերը՝ շինարարություն կատարողը, Դիլիջանի Մակարյան ազգից է:

Դիլիջանի համայնքապետարանը տարածքի սեփականատիրոջը շինարարության թույլտվություն տալուց առաջ պետք է պայման դներ, որ Դիլիջանի բնակիչներին տասնամյակներ ծառայած հետիոտնի ուղին պետք է անվնաս մնար, անխափան գործեր, սակայն Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանն այդ գործում թերացել է:

ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ԽՆԴԻՐ ԿԱ

Տավուշում հաստատվել է Արցախից բռնագաղթած 780 ընտանիք՝2970 անձ: Նրանցից շատերը ներկայումս ձմռան վառելափայտի խնդիր ունեն: «Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին գրավոր հարցրել է, թե մարզում բնակություն հաստատած արցախցի ընտանիքների համար ինչպես է լուծվել ձմռան վառելափայտի խնդիրը, մարզի 4 անտառտնտեսությունները ընդհանուր առմամբ որքան վառելափայտ են տվել նրանց, ինչ հիմունքներով:

Մարզպետարանից ստացված պատասխանն անորոշ է՝ տրված վառելափայտի քանակի մասին տվյալներ չպարունակող. այնտեղ նշված է. «Տավուշի մարզում բնակություն հաստատած արցախցի ընտանիքներին, ըստ իրենց դիմումների, անտառտնտեսությունների կողմից տրամադրվել ու տրամադրվում է թափուկներից անվճար վառելափայտ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԿՅԱԼՆԵՐ

ՋԵՐՄՈՒԿԻ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԸ՝ ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Շուտով Ամանոր է: Չնայած վերջին տարիներին տեղի ունեցած տխուր ու թեւաթափ անող իրադարձություններին՝ միեւնույնն է, Ամանորը ասոցացվում է ընտանիքի՝ հարազատների ու մտերիմների հետ: Այժմ մարդիկ նախընտրում են երկրից դուրս նստել՝ ծովի ափին, ոմանք գերադասում են հեքիաթային գիշերը նստել ռեստորանում, որոշներն էլ մի քանի օրով ցանկանում են կտրվել իրենց առօրյայից՝ տեղավորվելով հյուրանոցներում: Իսկ ի՞նչ արժե նման հաճույքներին տրվելը:

«Ժողովուրդ» օրաթերթը սկսում է շարք, որում պարբերաբար կանդրադառնա տարբեր հյուրանոցներում, ռեստորաններում Ամանորը նշելու գնի տատանմանը: Դեռեւս դեկտեմբերի սկիզբն է, սակայն արդեն իսկ Ջերմուկ քաղաքի հյուրանոցներից շատերում ազատ համար գտնելը դժվար է, երբեմն էլ՝ անհնար:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է տարբեր հյուրանոցներ դեկտեմբերի 31-ը իրենց մոտ անցկացնելու պատրվակով, արդյունքում պարզ է դառնում հետեւյալը.

«Jermuk Hotel and Spa» հյուրանոցից տեղեկացրին որ ազատ տեղեր չունեն, սակայն դեկտեմբերի 31-ից հունվարի 3-ը 2 անձի համար նախատեսված ստանդարտ սենյակն արժեցել է 500.000 դրամ՝ առանց ամանորյա միջոցառման:

«Grand Hotel Jermuk»-ից մեզ հայտնեցին, որ ազատ տեղեր չունեն, սակայն դեկտեմբերի 31-ից հունվարի 3-ը 2 անձի համար նախատեսված ստանդարտ սենյակն արժեցել է 495.000 դրամ՝ ներառյալ ամանորյա միջոցառումը:

«Armenia Wellness and Spa Hotel»-ից դեկտեմբերի 31-ից հունվարի 3-ը առաջարկում են 2 անձի համար նախատեսված ստանդարտ սենյակ՝240.000 դրամով՝ ներառյալ ամանորյա միջոցառումը:

Նրանք եւս հայտնեցին, որ այս պահին ազատ տեղեր չունեն:

«Moscow health hotel» առողջարանից հայտնեցին, որ դեկտեմբերի 31-ից հունվարի 5-ի համար 2 անձին առաջարկում են 350.000 դրամով ստանդարտ սենյակ՝ ներառյալ ամանորյա գալա համերգ՝ նախատեսված դեկտեմբերի 31-ին եւ հունվարի 1-ին: Հունվարի 2-ին էլ՝ խաշի հյուրասիրություն:

«Nairi» հյուրանոցն էլ դեկտեմբերի 31-ից հունվարի 3-ը 1 անձի համար առաջարկեցին 120.000 դրամով ստանդարտ սենյակ՝ ներառյալ տոնական ընթրիքը, հունվարի 2-ին՝ խաշը:

Այսպիսով, չնայած Ջերմուկի՝ հակառակորդի ուշադրության կենտրոնում հայտնվելուն՝ այդուամենայնիվ, առաջատար հյուրանոցները դեռեւս շարունակում են գերծանրաբեռնված աշխատել ու ընդունել հյուրերի:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՊՊԱ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱՊՊԱ պայմանագիր չունենալու համար տուգանքի չափը քաղաքացիների համար կնվազեցվի 75 տոկոսով, եթե քաղաքացին 24 ժամվա ընթացքում կնքի ԱՊՊԱ պայմանագիրը. հանվում է այդ պայմանագիրը Ոստիկանություն ներկայացնելու պահանջը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու նախագիծը ներկայացրել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը:

Ավելի պարզ վարչարարություն նախատեսող նախագիծը պատգամավորը ներկայացրեց ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Գործող կարգավորմամբ՝ ՀՀ քաղաքացիները ԱՊՊԱ պայմանագիր չունենալու պարագայում տուգանվում են 100 հազար դրամով, բայց գոյություն ունի խրախուսող նորմ, ըստ որի՝ ԱՊՊԱ պայմանագիր չունենալու հանգամանքը արձանագրելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում ԱՊՊԱ պայմանագիր կնքելու եւ դրա մասին ապացույց Ոստիկանություն ներկայացնելու պարագայում քաղաքացիները կարող են 100 հազար դրամի փոխարեն վճարել 25 հազար դրամ, այսինքն՝ի սկզբանե նախատեսված գումարի 25 տոկոսի չափով:

«Մեր քաղաքացիները, այսինքն, ոչ միայն պարտավոր են մոտակա 24 ժամվա ընթացքում այդ գումարը վճարել, այլ նաեւ պայմանագիրը ներկայացնել կամ Ոստիկանության բաժանմունք, կամ որեւէ պարեկային ծառայողի: Օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվում է այս հավելյալ պարտավորությունը հանել քաղաքացիների վրայից, որովհետեւ այս տեղեկատվությունը հասանելի է Ոստիկանության ծառայությանը»,-ասաց Աղաջանյանը:

75 տոկոսի վճարման պարտականությունից ազատող, խրախուսող նորմը ժամանակին մտել էր ԱԺ պատգամավոր Արմեն Խաչատրյանի օրենսդրական նախաձեռնությամբ: Պատգամավորը նկատել է՝ փոփոխությունը դրական արդյունք է տվել, պայմանագրերի քանակներն ավելացել են այս ընթացքում:

«Ըստ ներկայացված նոր նախագծի՝ քաղաքացուց այլեւս չի պահանջվելու մոտենալ Ոստիկանություն, ներկայացնել ԱՊՊԱ պայմանագիրը որպես ապացույց, որից հետո իր նկատմամբ տուգանքի որոշումը կփոխվի: Ոստիկանությունն օնլայն պետք է հետեւի, տեսնի ու վարույթը կարճի, 100 հազար դրամի փոխարեն 25 հազար դրամ պատասխանատվություն նախատեսի»,- ասաց Խաչատրյանը:

Հավելենք, որ նախագիծը հանձնաժողովում ստացավ դրական եզրակացություն, կքննարկվի խորհրդարանի լիագումար նիստում:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 28 ՃՏՊ. 4 մարդ զոհվել է, 44-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 21 դեկտեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. ԼոտՀՀ, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի, 20/1 հասցեում գտնվող 30,68 քմ դրամարկղ, 18,48 քմ սեղմված գազի կուտակիչներ, 60,69 քմ կոմպրեսորներ, 6 քմ էլեկտրական վահանակ, 78,12 քմ լցասյուներ, 8,3 քմ /14,94 խմ, 55,35 գծամետր/ պարիսպ եւ 0,29 հա հողամաս,

Լոտի մեկնարկային գինը՝ 48425000 (քառասունութ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ ՀՀ, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Հ. Շահբազյան փողոց, 10 հասցեում գտնվող 135,96 քմ բնակելի տուն, 37,8 քմ անասնաշենք, 44,89 քմ մառան եւ 0,103 հա հողամաս,

Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com
հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31
հեռ.՝ +374 11 56 45 13
կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

Team Telecom

ՆՈՐ ՄԵՐՆԴԻ ՑԱՆՑԸ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Հետեւողական, նվիրված ու թիմային աշխատանքի շնորհիվ Team Telecom Armenia-ի 25 գբ/վ թողունակությամբ NGN ցանցն արդեն կառուցված է Սյունիքի մարզի բոլոր մեծ բնակավայրերում եւ հասանելի է մարզի շուրջ 21000 տնային տնտեսության:

Առաջնահերթություն տալով համայնքների զարգացմանը՝ Team-ը ենթակառուցվածքի արդիականացումը եւ ցանցի կառուցումը սկսել է հենց մարզերից: Տարածաշրջանում եզակի այս ցանցի առկայությունը կօգնի տեխնոլոգիական, ֆինանսաբանկային եւ տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը, իսկ անհատներին արագ ու հուսալի կերպով կկապի աշխարհին:

«Յուրաքանչյուր ծրագիր իրականացնելիս մենք ոչ թե մտածում ենք՝ ինչ կտա այն այս պահին, այլ որքան երկար կարող է այդ ծրագրի արդյունքը սպասարկել մեր հայրենակիցներին ու ինչ ընդհանուր օգուտ կտա մեր երկրին: Մեզ համար շատ կարեւոր ու խորհրդանշական քայլ էր ժամանակակից այս ենթակառուցվածքի կառուցման աշխատանքներն առաջինն ավարտել Սյունիքի մարզում»,- ասում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Այս ցանցը նպաստում է նաեւ մարզաբնակ երիտասարդների համար կրթության հավասար հնարավորությունների ձեւավորմանը. հաշվի առնելով վերջինիս կարեւորությունը՝ ընկերությունն այս նոր սերնդի ինտերնետը տրամադրել է Մեղրիի նորաբաց «Լոֆթ» երիտասարդական կենտրոնին:

Խոսելով համագործակցության մասին՝ «Լոֆթ» կենտրոնների գլխավոր տնօրեն Արեւիկ Համբարձումյանը նշում է. ««Լոֆթ» կենտրոնը երիտասարդների ոչ ֆորմալ կրթության, ինքնազարգացման եւ մասնագիտական առաջին քայլերի լավագույն հարթակն է: Գերարագ ինտերնետի առկայությունը լավագույն միջոցն է՝ կրճատելու մարզ-մայրաքաղաք, ինչու չէ, նաեւ մարզ-աշխարհ տարածությունը: Այն հնարավորություն է տալու մարզաբնակ երիտասարդին՝ լավագույն ոչ ֆորմալ կրթությունը ստանալու»:

Սյունիքի մարզում Team-ի գերարագ, մինչեւ 25 գբ/վ թողունակությամբ NGN ցանցին հնարավոր է միանալ Կապան, Սիսիան, Գորիս, Քաջարան, Մեղրի, Ագարակ քաղաքներում:

Հայաստանի տարածքում այս ցանցն արդեն աշխատում է Ալավերդի, Արթիկ, Արմավիր, Արտաշատ, Բերդ, Բյուրեղավան, Գավառ, Եղվարդ, Իջեւան, Հրազդան, Ճամբարակ, Մեծամոր, Ջերմուկ, Սեւան, Սպիտակ եւ Վարդենիս մարզային խոշոր քաղաքներում ու մի շարք գյուղերում: Երեւանում այն հասանելի է Դավթաշեն, Արաբկիր, Ավան եւ Ջեյթուն վարչական շրջաններում:

Team Telecom Armenia-ի գերարագ ինտերնետին հնարավոր է միանալ՝ բաժանորդագրվելով Cosmo սակագնային փաթեթներին, որոնք ներառում են մինչեւ 1000 Մբ/վ ինտերնետ, թվային հեռուստատեսություն, ֆիքսված եւ բջջային կապ:

Team Telecom Armenia-ի մասին

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունը առաջին տելեկոմն է, որն իրականացրել է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային:

Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիաների հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը. 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը կապահովի որակյալ ինտերնետով Հայաստանի բոլոր բնակիչներին:

ԿՍՏԱՆԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ԴԻՄՈՒՄԻ

Հայաստանում ծնված՝ քաղաքացիություն չունեցող անձանց երեխաները Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք կստանան, առանց դիմումի:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ներկայացրեց Ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը:

Նախագծի առաջարկներից մեկը քաղաքացիություն չունեցող անձանց եւ ապաքաղաքացիության դեմ պայքարի տրամաբանության մեջ է: Այս պահին քննարկվում է քաղաքացիություն չունեցող անձանց մասին առանձին օրենքի ներկայացումը: Մինչեւ այդ կառավարությունը ներկայացված նախագծով է առաջարկ արել:

«Քաղաքացիություն չունեցող անձանց երեխաների հետ կապված դրույթ ունենք, որ նրանց մեխանիկորեն տալիս ենք ՀՀ քաղաքացիություն: Կա դիմումի պահ, առաջարկում ենք դիմումի պահանջը հանել, որ օրենքի ուժով այդ երեխաներին ճանաչենք ՀՀ քաղաքացի եւ դրանով նաեւ կատարենք 1954թ. ապաքաղաքացիության դեմ պայքարի կոնվենցիայով մեր ստանձնած պարտավորությունները»,- ասաց Ղազարյանը:

Նախագծով նաեւ հստակեցում է արվում, ու օրենքում՝ ֆիքսվում, որ ծնողներից մեկի քաղաքացիության դադարեցման պարագայում միայն կարող է անչափահասի քաղաքացիության դադարեցման վարույթ մեկնարկել: «Պրակտիկայի առումով ոչինչ չի փոխվում: Պարզապես իրավական կազուս կար օրենքի մեջ»,- ասաց ծառայության պետը՝ հավելելով, որ պարզապես երկու հոդվածների միջ անհամապատասխանություն էր առաջացել:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը հետաքրքրվեց, թե այն դեպքերի մասով, երբ անձինք մինչեւ զինվորական հաշվառումը հրաժարվում են ՀՀ քաղաքացիությունից, ինչ աշխատանք է տարվում: Ղազարյանը պատասխանեց, որ այդ հարցն իրենց ուշադրության կենտրոնում է, այս առաջարկն էլ միտված է պատգամավորի մատնանշած խնդրի լուծմանը:

Նախագիծը հավանություն ստացավ եւ դրական եզրակացությամբ կընդգրկվի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպիչներ՝ «Բի էս Թի» ՍՊԸ-ի եւ «Ֆլորես Աճուրդի տուն» ՍՊԸ-ի կողմից, այդ թվում «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացվող բոլոր այն անշարժ գույքերի աճուրդները, որոնց աճուրդային վաճառքի ավարտը սահմանվել էր մինչեւ 2023թ.-ի դեկտեմբերի 29-ը, երկարաձգվում են մինչեւ 2024թ.-ի հուլիսի 1-ը ներառյալ: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 52-61-85 կամ այցելել բորսա՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա 40, 82/31 հասցե, ժամը 9:30-17:00:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (2)

Ի փոփոխություն «ԲիէսԹի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 25.05.2022թ. թիվ 74 (2554) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «ԲիէսԹի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «ՎՊԷԿՏԻ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, ք. Երեսան, Աջափնյակ, Աշտարակի խճուղի, թիվ 39 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդային փուլերը շարունակվելու են 11.12.2023թ.-ից՝ 446391400 ՀՀ դրամ մեկնարկային գնով: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am կայք:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

AAD-ԻՆ ԱՄՓՈՓՈՒՄՆ ՈՒ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Դեկտեմբերի 1-ին ամենաարբեր ոլորտի ներկայացուցիչներին մի հարկի տակ էր հավաքել AAD (Հայաստան, Արցախ, Սփյուռք) 14-րդ ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպած թիմը: Երեկոն իրենց ներկայությամբ պատվել էին սիրված եւ ճանաչված մարդիկ՝ պատշտոնյաներ, պատգամավորներ, դերասաններ, լրագրողներ, երգիչներ, մարզիկներ, գործարարներ եւ, իհարկե, հայրդիներ, որոնք իրենց մարմնի մի մասը թողել էին պատերազմի դաշտում՝ հանուն բոլորիս: Դահլիճում էին նաեւ մեր հայրենիքի՝ Հայաստանի ու Արցախի համար զոհված հերոսների ծնողներ:

Արդեն 14 տարի է, ինչ մրցանակաբաշխության կազմակերպիչ Մամիկոն Խուրշուդյանը հետեւողական ջանքերով ամփոփում է տարին եւ գնահատական տալիս: Խուրշուդյանի խոսքով՝ միջոցառումը միասնականության կոչ ու հարգանքի տուրք է մեր բոլոր հերոսներին: Մեր զրուցակիցը շեշտեց, որ մենք այսօր նման միջոցառումների պահանջարկ ունենք: Մրցանակաբաշխության սկիզբը դրեց արցախցի 19-ամյա Հայկ Մանգասարյանը Արաբո Իսպիրյանի հեղինակային «Տուն իմ հայրենի» երգով: Մրցանակաբաշխության մեկնարկը տրվեց «Տարվա մարդ» անվանակարգով: Արժանի եւ վաստակած տիտղոսը 2023 թվականին կոմայից դուրս եկած եւ վերածնված ժամկետային զինծառայող Նարեկ Պողոսյանինն էր: Սեպտեմբերի 1-ին Ադրբեջանի ԶՈՒ հարձակման հետեւանքով Սոթքի հատվածում Նարեկ Պողոսյանի անունը ներառվել էր զոհվածների ցանկում: Նույն օրը, սակայն, գերատեսչությունից հայտնեցին, որ հրաշք է եղել, եւ զինվորի սրտի զարկերը վերականգնվել են: «Տարվա Սխրանք» անվանակարգին արժանացան 44-օրյա պատերազմի մասնակից, Հայաստանի ազգային հերոս, կյանքը փառքով հայրենիքին հանձնած Վահագն Ասատրյանը, Մասիս Միքայելյանը, Կարեն Միրզոյանը, վիրավոր հերոս Կարեն Գրիգորյանը, Արամ Ասլանյանը, Համիդ Բրոյանը, Միքայել Սարգսյանը: «Հայրենիքի նվիրյալ զավակ» անվանակարգին արժանացան վաստակավոր ջազմեն, ժողովրդական ատիրստ Մալխասը՝ Լեւոն Մալխասյանը, օպերային երգչուհի, ժողովրդական արտիստ Հասմիկ Պապյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Ռոմիկ Մխիթարյանը, Արթուր Դավթյանը եւ սիրված դերասան Արմեն Մարությանը: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար մրցանակի են արժանացել արվեստի վաստակավոր գործիչ Նարինե Զարիֆյանը եւ երգահան Ռուբեն Հախվերդյանը, գեներալ-մայոր Աշոտ Գասպարյանը: Հայրենիքի մատուցած ծառայությունների համար մրցանակի արժանացավ նաեւ դերասանուհի Անահիս Սարդարյանը: Հայ մշակույթում ներդրած ավանդի համար մրցանակի արժանացան քանդակագործ Արման Նուռը, Արմանուշ Հակոբյանը եւ Արա Թորոսյանը (Մուրզոն): Հայ հեռուստատեսությունում եւ ռադիոյում ներդրած ավանդի համար մրցանակի արժանացան Եգոր Գլումովը, Ռաֆայել Ղազանչյանը եւ Լիլի Հովերը: Հայ երգարվեստում ներդրած ավանդի համար մրցանակի է արժանացել Համլետ Գեւորգյանը: Հայ երգարվեստում ներդրած ավանդի համար մրցանակ է ստացել Աստղիկ Սաֆարյանը: Հայ թատրոնում եւ կինոյում ներդրած ավանդի համար մրցանակի է արժանացել Աբել Աբելյանը: Հայ սպորտում ներդրած ավանդի համար մրցանակի է արժանացել Գառնիկ Հայրապետյանը: «Տարվա լավագույն ապրանքանիշ» անվանակարգին արժանացան «Tiga Construction» «AGGRESSION», «VooDoo Lounge», «Lusin's Bakery» ընկերությունները: «Տարվա լավագույն մարզիկ» անվանակարգին արժանացավ ծանրորդ Գոռ Սահակյանը, որը Երեւանում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանին առաջին ոսկին էր բերել, վերջերս էլ՝ Մեքսիկայի Գվադալախարա քաղաքում դարձել երիտասարդների աշխարհի առաջնության չեմպիոն: Հայ երաժշտության ու երգեցողության զարգացմանն ուղղված աշխատանքների համար հատուկ մրցանակի արժանացավ «Հայկ Հակոբյան» հիմնադրամը: «Տարվա լավագույն երգահան»-ը Անիտա Հախվերդյանն է, «Տարվա լավագույն վոկալի մասնագետ»-ը՝ Անգին Համբարձումյանը, «Տարվա լավագույն ժողովրդական երգիչ»-ը՝ Հարություն Մկրտչյան, իսկ, ահա, «Տարվա լավագույն պատանի երգչուհի»-ն՝ Անահիտ Գաբրիելյանը: «Տարվա լավագույն երաժշտական խումբ» անվանակարգին արժանացավ The Boing Orchestra խումբը: «Տարվա լավագույն կերպարային դերասանուհի»-ն Անատի Սաքանյանն է, «Տարվա լավագույն հումորային դերասան»-ը՝ Արեն Սաֆարյանը, «Տարվա լավագույն սերիալային դերասան»-ը՝ Վահե Մկրտչյանը: «Տարվա լավագույն սերիալային դերասանուհի»-ն Էլեն Ասատրյանն էր: «Տարվա լավագույն դերասան» եւ «Տարվա լավագույն դերասանուհի» անվանակարգին էլ արժանացան համապատասխանաբար Աշոտ Տեր-Մաթեւոսյանն ու Էվա Խաչատրյանը: «Տարվա լավագույն հեռուստատեսային նախագիծ» անվանակարգին արժանացավ «Սրտի տանիքներով» հաղորդաշարը, հաղորդավարուհի՝ Քնարիկ Զաքարյան: «Տարվա լավագույն հաղորդավարուհի»-ն Նանե Արզումանյանն է, «Տարվա լավագույն լուսանկարիչ»՝ Սարո Դավթյանը: «Տարվա լավագույն բժիշկ»-ը Սեյրան Սահակովն է, Ազնար Այդինյանը եւ Արմինե Սարգսյանը: Հասարակություն-ոստիկանություն կապի ամրապնդման գործում ունեցած ավանդի համար մրցանակի են արժանացել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Խուդինյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանն ու ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանը: Այսպիսով, 2023 թվականն ամփոփված է, բոլորիս բարի երթ դեպի 2024 թվական:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԻՆՏԵՐ»-Ը ՀԱՂԹԵԼ Է

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 14-րդ տուրի շրջանակներում «Ինտեր»-ը հյուրընկալվել էր «Նապոլի»-ին:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ միլանյան ակումբին՝ «Ինտեր»-ին, հաջողվեց երեք անպատասխան գնդակ ուղարկել Իտալիայի գործող չեմպիոնի դարպասը: «Ինտեր»-ի կազմում աչքի ընկան Հական Չալհանօղլուն, Նիկոլո Բարելան եւ Մարկուս Տյուրամը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 74-րդ րոպեին:

Այս տուրից հետո «Ինտեր»-ը շարունակում է գլխավորել Իտալիայի առաջնության մրցաշարային աղյուսակը: «Նապոլի»-ն միայն 5-րդն է:

ՉԱՎԻՆ ՈՒ «ԲԱՐՍԵԼՈՆԱՆ»

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» իսպանացի գլխավոր մարզիչ Չավին մեկնաբանել է 1:0 հաշվով հաղթանակը Մադրիդի «Աթլետիկոյի» նկատմամբ Լա Լիգայի 15-րդ տուրի խաղում: Միակ գոլը խփել էր պորտուգալացի հարձակվող Ժոաու Ֆելիշը, որի տրանսֆերային իրավունքը պատկանում է «Աթլետիկոյին»:

«Շատ լավ խաղաց մեր թիմը: Երկրորդ խաղակեսում «Աթլետիկոն» որոշակի ճնշում գործադրեց, բայց մենք տեսանք այս մրցաշրջանում «Բարսելոնայի» ամենալիարժեք խաղը:

Ժոաու Ֆելիշը հրաշալի խաղաց, լավ էր ընտրում դիրքը: Նա մեր ջոկերն էր: Ֆելիշը երջանիկ է, ակտիվ եւ գոհ իր խաղից: Նա շատ խելացի էր գործում: Թիմում նրան հրաշալի են ընդունել: Ֆելիշն ավելի է միավորել թիմը: Ուրախ եմ նրան տեսնել մեր կազմում»,- Չավիի խոսքը մեջբերում է AS-ը:

«Բարսելոնան» 34 միավորով բարձրացավ երրորդ տեղ, «Աթլետիկոն» նահանջեց չորրորդ տեղ՝31 միավոր:

ԾԱՆՐԱՄԱՐՏՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայաստանի 10 ծանրորդ կմասնակցի Քաթարի մայրաքաղաք Դոհայում դեկտեմբերի 4-ին մեկնարկած ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի (IWF) Գրան Պրի երկրորդ մրցաշարին:

100 երկրների 400 ծանրորդներ կպայքարեն նաեւ 2024թ. Փարիզի օլիմպիական խաղերի վարկանիշային միավորների համար:

Կանանց Հայաստանի թիմում Արտաշես Ներսիսյանն ընդգրկել է Ալեքսանդրա Գրիգորյանին (59 կգ), Տաթեւ Հակոբյանին, Լիանա Գյուրջյանին (երկուսն էլ՝ 81 կգ) եւ Հռիփսիմե Խուրշուդյանին (87 կգ). հաղորդում է ՀԱՕԿ-ի կայքը (armnoc.am):

Փաշիկ Ալավերդյանի գլխավորությամբ տղամարդկանց թիմում հանդես կգան Անդրանիկ Կարապետյանը (89 կգ), Դավիթ Հովհաննիսյանը (96 կգ), Գարիկ Կարապետյանը, Սամվել Գասպարյանը (երկուսն էլ՝ 102 կգ), Վարազդատ Լալայանը, Սիմոն Մարտիրոսյանը (երկուսն էլ՝+109 կգ):

«ՀԱՅԱՍԱԹ-1»

ԿԱՊ ԵՆ ՀԱՍՏԱՏԵԼ ՏԻԵԶԵՐՔ

«Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի աշխատակիցներին հաջողվել է կապ հաստատել դեկտեմբերի 1-ին SpaceX ընկերության Falcon 9 հրթիռով տիեզերք արձակված հայկական արտադրության «Հայասաթ-1» արբանյակի հետ, որն արդեն աշխատանքային վիճակում է:

«Ուրախ ենք տեղեկացնել, որ մենք հաջողությամբ հետեւում ենք մեր «Հայասաթ-1» քյուբսաթ ձեւաչափի արբանյակին: Այն աշխատանքային վիճակում է եւ փոխանցում է իր պարբերական ազդանշանները: Հաջորդ փուլում մենք կշարժվենք առաջ, ինչպես նախատեսել ենք: Շնորհավորում ենք թիմին եւ մեր բոլոր աջակիցներին»,- ասվում է «Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի ֆեյսբուքյան էջում:

«Հայասաթ-1» արբանյակը ստեղծվել է «Բազումք» տիեզերական հետազոտությունների լաբորատորիայի եւ Գիտական նորարարության եւ կրթության կենտրոնի կողմից: Այն հայկական երկրորդ արբանյակն է, որն արձակվել է տիեզերք, սակայն առաջինն է, որը մշակվել ու ստեղծվել է հայ մասնագետների կողմից Հայաստանում:

«Հայասաթ-1» արբանյակը զինված է նրա տարբեր կողմերի վրա ընկնող լույսի ինտենսիվությունը չափող տվիչներով, արբանյակի համար կողմնացույցի դեր կատարող մագնիսաչափերով, արբանյակի պտույտները մարող մագնիսադարձիչներով, տարբեր մոդուլների առավել կրիտիկական մասերի ջերմաստիճանները չափող տվիչներով, ինչպես նաեւ կողմնորոշման փոփոխությունները չափող իներցիոն տվիչներով:

Արբանյակն ունի երկրորդային օգտակար բեռ, որի չափումների շնորհիվ տվյալներ են ստացվելու արբանյակի պտույտների, դիրքի եւ շարժման վերաբերյալ: Այն կազմված է GPS ընդունիչից՝ իր ալեհավաքներով հանդերձ, եւ Հայաստանում մշակված ու ստեղծված փորձնական իներցիոն չափիչ սարքից (IMU):

● *Դեկտեմբերի 4-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Լյու-Բյոֆ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500-2500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ բնակելի տարածքների սեփականաշնորհման համար:

Մովսես Գրիգորյան (43 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են՝ տվյալ հանրակացարանը տնօրինող վերադաս կառավարման մարմին 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումին կից ներկայացվում են իրավասու մարմինների կողմից տրված՝անձի՝1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը եւ զբաղեցրած հանրակացարանային բնակելի տարածքում անձի՝3 տարվանից ավելի բնակվելու փաստը հաստատող տեղեկանքներ:

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

ՀԱՐՑ. Արդյոք «Զվարթնոց» օդանավակայանում գործո՞ւմ է ուղեբեռի պահասենյակ:

Հովսեփ Աղաբաբյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում գործում է ուղեբեռի պահասենյակ, որը գտնվում է ժամանման սրահի հանրային գոտում:

«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1 կտոր ուղեբեռի՝ մինչեւ 24 ժ. պահելու վճարը 3000 դրամ է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ ԱԺ-ի շենքի մոտ տեղի է ունեցել «ՀայաՔվե» նախաձեռնության կողմնակիցների բողոքի ցույցը:

Նրանք պահանջում էին Ազգային ժողովից ընդունել Արցախի հանձնումը քրեականացնող օրինագիծ, որն այս պահին քննարկվում է Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 5 + 8 + 12
Կոտայքի լեռներ	- 2 + 1 + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 1 + 1 +11 + 14
Գեղարքունիք	0 + 4 + 7 + 11
Լոռի	+ 4 + 8 +15 + 18
Տավուշ	+ 7 + 12 +18 + 20
Արագածոտնի լեռներ	- 1 - 5 + 8 + 11
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 5 + 8 + 11

Արարատ	- 3 + 1 +12 + 14
Արմավիր	- 1 - 4 +12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	- 2 + 1 +12 + 13
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +20 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 +16 + 20
ԼՂՀ	+ 2 + 6 +11 + 14
Երեւան	+ 2 + 4 + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*